


«ՀԵՐՈՍՆԵՐՈՒ ՄԱՀԸ ՉԵՆ ՈՂԲԱՐ»

Posted on July 3, 2023 by Keghart



Category: [Opinions](#)



Արաբական աշխարհի, յատկապէս Լիբանանի, ամենէն յարգուած ու վաւերական լրագրողներէն մէկն է եղած Ղասսան Թուէյնի (5 Յունուար 1926 – 8 Յունիս 2012) Ան կու գար յոյն ուղղափառ համայնքէն, քաղաքագետ էր, դիւանագետ եւ լաւ բարեկամ մը հայ համայնքին: Իր գլխաւորած «ալ-Նահար» օրաթերթը կը վայելէր ժողովուրդին վստահութիւնը: Մ. Ծիրանիի սոյն յուշապատումը կը յանձնենք մեր ընթերցողներուն ուշադրութեան՝ իր յատկանշական վերնագրին համար, որ կը պատկանէր այս Մեծ լիբանանցիին: (ԽՄԲ.)

Ղասսան Թուէյնի

Մովսէս Ծիրանի, Երեւան, Ապրիլ 2023

Պէյրուք, 1992. «Noah's Ark» Յուլցասրահ, ուշ աշուն:

Հեռաձայնը հնչեց.

--Մովսէս, Ղասսան Թուէյնիի տիկինը՝ Շատիա Նինին կ'ուզէ քեզ տեսնել, կարելոր հարցով մը, հիմա կարելի՞ է:

«Sursock» Թանգարանի տնօրէն՝ Սիլվա Աճեմեանն էր: Անհամբեր էի հանդիպելու Թուէյնիի տիկնոջ: Ան չուշացաւ... սուրճը պատուիրելէ ետք, ժպտաց եւ հին ծանօթի նման սկսաւ մտերմաբար խօսիլ.

-- Քանի մը օր առաջ Ղասսանը «Sursock» թանգարանին մէջ ցուցադրուած Caricaturist Stavro-ի դիմաքանդակի դիմաց երկարօրէն կեցաւ ու հիացած դիտեց: Գիտե՞ս, շատ դժուարահաճ է, դիւրութեամբ բան չի հաւնիր, սակայն այս մէկը սիրեց ու հետաքրքրուեցաւ հեղինակով: Սիլվան ամէն ինչ ըսաւ քու մասիդ ու բացատրեց թէ դուն ո՞վ ես, ի՞նչ կ'ընես եւ թէ դուն ես քանդակագործ Մազմանեանի կապը: Ըսաւ նաեւ որ դուն ես զինք հրաւիրողը, իբրեւ Հայաստանի լաւագոյն քանդակագործը ու կը գործակցիս հետը. Ճի՞շդ է:

--Գործակցիլը ճիշդ է: Ճիշդ է նաեւ որ իմ ճանչցածներուս մէջ Հայաստանի երիտասարդ քանդակագործներէն լաւագոյնն է, սակայն պաշտօնապէս զինք հրաւիրողը Համազգային Կրթական եւ Մշակութային Միութիւնն է:

-- Լաւ, ի՞նչ կը կարծես, Մազմանեանը կը համաձայնի՞ գալ մեզ մօտ ու քանդակել զինք:

--Կը կարծեմ թէ կը համաձայնի, սակայն առանց իր կարծիքին չեմ կրնար վերջնական պատասխան տալ:

Երբ Մկոյին բացատրեցի թէ խօսքը ինչի՞ մասին է, ըսաւ.


--Սկզբունքով համաձայն եմ, սակայն պետք է որ ճանաչեմ մարդուն..

-- Կը ճանաչես անշուշտ, կը գնանք ու կը ծանօթանանք...

-- Լաւ, բայց մի քիչ խօսայ իր մասին: Հետաքրքիր եւ արտայայտիչ դէմք ունի՞:

-- Մկօ ջան՝ այդ մէկը դու պիտի որոշես: Անձնապէս նրան չեմ ճանաչել, սակայն Ղասսան Թուէյնին Լիբանանի այն հազուագիւտ լրագրող եւ մշակութասէր մտաւորականներից է, որ յարգուած ու գնահատուած է նաեւ իբրեւ քաղաքական գործիչ:

--Որ եղպէս է, հարց չկայ... գնում ենք...



Մ. Մազմանեանը աշխատանքի պահուն

Քանի մը օր ետք, [Այն Սաաառէ](#), «Maison de Poet»:

Թուէյնին առաջին հերթին պտտցուց մեզ տան կարգ մը սենեակներն ու յատկապէս գլխաւոր հիւրասրահը, որ իր շքեղութեամբն ու տարբեր տեսակի արուեստի գործերու հաւաքածոներով, թանգարանի տպաւորութիւն կը ձգէր...: Ապա առաջնորդեց իր գրադարանը, ուր նստեցանք գրոյցի: «Հարցաքննել» եւ պետք եղած տեղեկութիւնները

ստանալէ ետք Մազմանեանէն, հերթը եկաւ ինձի.

-- Սիլվան ըսաւ որ դուք միայն Հայեր «promote» կ'ընէք (կը քաջալերէք), ինչո՞ւ, լիբանանեան արուեստը չի՞ հետաքրքրեր ձեզ:

-- Նախ ըսեմ որ ես միայն հայկական արուեստ չեմ որ կը ներկայացնեմ, այլ նաեւ ռուսական ու լիբանանեանը: Իսկ ձեր հարցին պատասխանելէ առաջ, կ'ուզէի գիտնալ, թէ ինչո՞ւ շեշտը դրած էք Մազմանեանի ստեղծագործութեան վրայ:

--Այո, Stavro-ն լաւ կը ճանչնամ..., այդ կիսանդրին բացառիկ գործ է, տպաւորիչ եւ իւրայատուկ, սակայն այս պարագային խօսքը «Portraitist»ի (դիմանկարիչ) մասին է, այլապէս մենք ալ ունինք մեծ արուեստագետներ, ինչպէս՝ Պասպուսները, Օմար Օնսին, Ժան Խալիֆէն, Արեֆ Ռեյիսը, մանաւանդ Շաֆիք Ապպուտն ու Փօլ Կիրակոսեանը, որոնք միջազգային դեմքեր են արդէն:

Վիճաբանութենէ խուսափելու համար, ըսի.

-- Փօլ Կիրակոսեանը շատ բարձր կարծիք ունի թե՛ ձեր եւ թե՛ ձեր առաջին տիկնոջ՝ բանաստեղծուհի Նատիա Համատի մասին, որուն իր երփնագրած դիմանկարներէն քանի մը հատը շատ կը փափաքէր հրատարակուած տեսնել իր երկրորդ պատկերագիրքին մէջ, սակայն ինձի անծանօթ պատճառներով այդ մէկը չիրականացաւ...:

--Ճիշդ է, այդ շարքը երեւոյթ է իր արուեստին մէջ: Փօլը իմ լաւ բարեկամս է եւ ամենանախընտրած արուեստագետներէն մէկը: Իսկ դուն ի՞նչ կապ ունիս անոր հետ... ազգակա՞ն էք:

--Ոչ, մենք լաւ բարեկամներ ենք: Իր յանձնարարութեամբ ես գրեցի, խմբագրեցի ու հրատարակեցի իր երկրորդ պատկերագիրքը, սակայն առանց Նատիա Թուէյնիի դիմանկարներուն, որոնց բնօրինակները տեսնելու բախտը չեմ ունեցած... հակառակ բոլոր ցանկութեանս:


Ապա ոտքի ելաւ, դարակներէն հանեց Կիրակոսեանի պատկերագիրքը, բերաւ դրաւ սեղանին ու ակեցուց.

--Ա՞յս գիրքի մասին է խօսքը: Մովսէս Ծիրանին դո՞ւն ես:

--Այո՛:

--Հիմա կը հասկնամ... լաւ... իրաւունք ունիս, կարծեմ ժամանակը եկած է զանոնք հրապարակաւ ցուցադրելու:

Այս բոլորէն ետք Թուէյնիին վերաբերմունքը այնքան ջերմացաւ իմ հանդէպ, որ յետագային մեր յարաբերութիւնները սկսան նոյնիսկ ընտանեկան բնոյթ ստանալ...:



Պատին վրայ կ'երեւին Նատիա Թուէյնիի դիմանկարները, գործ՝ Փօլ Կիրակոսեանի

Շաբաթ մը ետք, Նոյն վայրը:

Թուէյնիի ապարանքին արեւոտ սենեակներէն մէկը վերածուած էր արուեստանոցի: Երբ Մկոն սկսաւ ծեփակերտել անոր կիսանդրին, Նախ թարգմանիչի դեր կատարեցի եւ ապա սկսայ խօսեցնել զինք, որովհետեւ Մազմանեանը կ'ուզէր շարժման մէջ դնել անոր դէմքն ու ներաշխարհը: Ընթացքին, համարձակեցայ հարցնել Նոյնիսկ իր կնոջ մահուան պարագաներու մասին: Պարզուեցաւ որ ան իր կողակիցն ու պատերազմի ընթացքին մահացած երկու երեխաները (աղջիկն ու տղան) իր առանձնատան բակը թաղած է... : Իսկ առաւել զարմանալին այն էր, որ ան առանց յուզումի կը խօսէր անոնց մասին: Յետագային, երբ Շատիային հարցուցի այս մասին, ըսաւ.

--Եւ՛ր Մովսէս, շատեր այդպէս կը կարծեն: Ճշմարտութիւնը հակառակն է: Ղասսանը շատ զգայուն է ու չափազանց կապուած իր հարազատներուն: Անոր հոգեկան հանգստութիւնը եւ ունեցած բարձր կորովը կը բխին իր ուժեղ անհատականութենէն ու մաքուր հաւատքէն: Ան կը հաւատայ հոգիի անմահութեան ու չի վախնար մահէն...:

Իսկապէս այդպէս էր Թուէյնին, կարծեք թէ «մտերմացած» էր մահուան հետ...: Երբ կիսանդրիին իրականացումը բարեյաջող աւարտեցաւ, շատ դժուար կը թուէր ըլլալ անոր տեղադրելու տեղը որոշելը: Ամիսներ անց, երբ դարձեալ կ'այցելէի իրեն, տեսայ որ կիսանդրիին տակաւին կը մնար Նոյն տեղը՝ գրադարանի սեղանին: Մինչեւ որ առիթ գտնեմ ու հարց տամ կիսանդրիի մասին, յանկարծ պատահաբար Իսամ Ֆարեսը Ներս մտաւ: Անոնք անմիջապէս առանձնացան կողքի սենեակը, եւ ես առանձին մնացի կնոջը՝ Շատիային հետ, որ կարծես թէ միտքս կռահեց ու ըսաւ.

--Ի՞նչ կը կարծես, ո՞ր պէտք է դնենք Ղասսանի դիմաքանդակը: Չարմանալիօրէն չի կրնար որոշել... շուարած է... ո՞ր որ առաջարկեմ, իրեն յատուկ կտրուկ ձեւով կը մերժէ:

--Իրականութեան մէջ ինք որոշած է արդէն, միայն քու առաջարկիդ կը սպասէ.

--Որոշա՞ծ է, ո՞ր...

-- Նատիային եւ երեխաներու դամբարանը...

Շատիան պահ մը լռեց, ապա զարմացած ըսաւ.

--Օ՛, դո՞ւրսը... պարտեզի՞ն մէջ: Իսկ ինչո՞ւ այդպէս կը կարծես.

--Կարծելու հարց չկայ, երբ որ կիսանդրիին տեղադրելու խօսքը բացուի, կ'երթայ կը կենայ Նատիայի գերեզմանին դիմաց ու կը լռէ... թերեւս կը զրուցէ հետը... գուցէ կ'աղօթէ...

Այն Սաատէ, 1996, Ձմեռ:

Թուէյնին ոչինչ կը խնայէր իր ապարանքի հաւաքածոները համալրելու եւ անոնց որակը բարելաւելու համար: Որոշած էր զայն նուիրել իր համայնքին, իր կնոջը՝ Նատիայի յիշատակին իբրեւ "Maison de Poet":

Ամիսներ ետք, երբ դարձեալ կ'այցելէի իրեն, ամենէն առաջ տարաւ ու ցոյց տուաւ կիսանդրիին, որ զետեղուած էր ճիշդ հոն, ուր յաճախ կը տեսնէի զինք իր կնոջ դամբարանին դիմաց: Պահ մը լռելէ ետք, շուռ եկաւ եւ առաջնորդեց զիս այն սենեակը, որուն պատերէն կախուած էին Նատիա Թուէյնիի դիմանկարները: Որոշ բացատրութիւններ տալէ ետք ըսաւ.

--Այսօր սուրճը պիտի խմենք այս «գլուխ-գործոց»ներու հովանիի ներքոյ:



Ձախեն աջ՝ Մ. Հերկելիան, փոքրիկն Հերակ, Ղ. Թուէյնի եւ Շ. Նինի

Այն Սաատէ, 1997, Ամառ:

Նստած էինք իր առանձնատան բակը, լողաւազանի եզրին, Շատիայի եւ Իսամ Ֆարեսի կնոջ՝ Հալայի հետ: Օրը Կիրակի էր, ջերմ ու հաճելի: Հալան եկած էր Թուէյնին եւ զիս առաջնորդելու Պաապտաթի իրենց պալատը, ցոյց տալու համար իր նոր ձեռք բերած կարգ մը սրբանկարներն ու խճանկարները:

Յանկարծ անտառի միւս դարպասէն մօտեցան Ժպրանն ու իր նոր ընկերուհին՝ Տինա Ազարը, այդ օրերու Լիբանանի գեղեցկուհին: Ժպրանը իր նախկին կնոջմէն՝ Միրնա Մըրրէն ունեցած երեխաները ողջունելէ եւ անոնց հետ ողջագուրուելէ ետք, ուզեց տեսնել նաեւ հայրը: Շատիան տեղեկացուց.

--Ղասսանը ներսը հանդիպման մեջ է Իսամի եւ քանի մը այլ ընկերներու հետ, որոնք համայնքային հարց մը կը քննարկեն...: Շատ չի տեսեր, քիչ ետք կու գայ:

Շանթաքսման ընթացիկ գրոյցէ ետք ժպրանը ըսաւ.

-- Հայրս իր դիմաքանդակը դրած է մօրս գերեզմանին ճիշդ դիմացը: Կը հասկնամ...: Կիսանդրին թէ՛ ինքնատիպ է, թէ՛ գեղեցիկ եւ թէ՛ արտայայտիչ...

Ֆարեսի կինը՝ Հալան առաջարկեց.

--Չե՞ս ուզեր որ քեզ ալ ծեփակերտե... Ես շատ պիտի ուզէի որ Իսամն ալ քանդակեր...

Շատիան աւելցուց.

-- Լաւ պիտի ըլլար ժպրան... մտածե...

Իսկ ժպրանը կանխելու համար անոնց պնդումները ըսաւ.

-- Իմ դիմաքանդակը չէ, բայց շատ պիտի ուզէի, նոյն ոճով ունենալ «Մալաք ժպրայիլի» արձանը (հրեշտակ), որովհետեւ իմ «Հովանաւորն» է, ու բազմաթիւ փորձանքներէ փրկած գիւ... :

Իմ հաւատացեալ ընթերցող՝ դժբախտաբար յետագային չկրցաւ փրկել գինք. ինչպէս յայտնի է, գոհ գնաց դաւադիր ռումբի մը, 2005-ի Դեկտեմբերին:

Այն Սաատէ, 1999. Ձմեռ:

Թուէյնին իբրեւ արուեստի գործերու հաւաքորդ, չափազանց բծախնդիր էր ու Նրբաճաշակ... յատկապէս սրբանկարչութեան (iconography) պարագային: Յատուկ սեր ունէր «Մելքիթ» եւ մասնաւորապէս յունական սրբանկարներու հանդէպ...: Պատահեցաւ որ քովս բերեն «Սէնթ Նիկոլայի» մէկ յունական սրբանկարը, որ տարօրինակ էր թէ՛ յղացքով եւ թէ՛ ձեւով: Յաջորդ օրն իսկ տարի եւ դրի գայն իր գրադարանի սեղանին:

Տրուած ըլլալով, որ սրբանկարը կամ առհասարակ հոգեւոր սպասները առեւտուրի մէջ պէտք չէ չարաշահել, համաձայնած էինք, որ ես ճիշդ ինքնարժեքը պիտի ըսեմ, իսկ ինք առանց սակարկելու արդարօրէն պիտի որոշէ իմ բաժինը: Այդպէս ալ ըրի...: Ան սրբանկարը լաւ մը դիտելէ եւ խոշորացոյցով սերտելէ ետք զարմացած երեսիս նայեցաւ ու ըսաւ.

-- Շատ լաւ, icon-ը թող մնայ, Սիլվայի կարծիքը կ'առնեմ եւ յետոյ... կը խօսինք:

Քանի մը օր ետք, Շատիան հեռաձայնեց ու... հրաւիրեց: Գացի. հոն էր նաեւ Սիլվա Աճեմեանը: Հետաքրքրական ու շահեկան գրոյց ունեցանք սրբանկարչութեան, յատկապէս «Մելքիթ» արուեստի շուրջ: Երբ պիտի մեկնէի, Թուէյնին դուրս եկաւ հետս գիւ ճանապարհելու, գրկեց գիւ ու վերնաշապիկիս վերի գրպանը վճարագիր (check) մը զետեղեց ու ըսաւ.

-- Հոս մի՛ ստուգեր, յետոյ կը նայիս, թէեւ վճարածս իր գինէն պակաս է, սակայն քու

ակնկալածեղ շատ անելին է:

Երբ ինկնաշարժ մտայ եւ ստուգեցի վճարագիրը, զարմանքով նկատեցի, որ իմ ակնկալածես չափազանց շատ անելին էր իր տուածը...:

Իմ հաւատացեալ ու պարկեշտ ընթերցող՝ այդպէս էր Ղասսան Թուէյնին, աստուածավախ, պարկեշտ ու արդարամիտ:



Ձախէն աջ՝ Ղասսան Թուէյնի, Սիլվա Աճեմեան, Շատիա Նինի եւ Մովսէս Հերկեյիան

Այն Սաատէ, 2006, Ձմեռ:

Ժպրանի ահաբեկումէն ետք, ինծի համար չափազանց դժուար էր Թուէյնիի մօտ երթալը... ցաւակցութեան: Երկու երեխաներուն եւ կնոջը իր տան բակին մէջ թաղելէ ետք, կը կորսնցներ նաեւ իր աւագ ու վերջին որդին, որուն քանի մը անգամ հանդիպած ըլլալու բախտը ունեցած էի: Ամիսներ ետք, հեռաձայնեցի Շատիային եւ ցանկութիւն յայտնեցի այցելելու «Ըսթեզը»: Ան ըսաւ որ խստիւ պատուիրուած է իրեն, որ ոեւէ հիւր չ'ընդունիր: Թերացած էի... յանցաւոր զգացի ու տխրեցայ... : Քիչ անց, սակայն Շատիան

Ինք հեռանալուց եւ ըսաւ.

--Մովսէս, «Ըսթեզը» անհամբեր կը սպասէ քեզի:

Երեխայի պէս ուրախացայ... : Ամիջապէս հնդիկ վարորդիս՝ Շանգարին թելադրեցի, որ քանդակագործ Ալեք Քոչարի մարմարակերտ «Հրեշտակը» ինքնաշարժին մէջ դնէ: Բարձրացանք Այն Սաատէ: Առաջին անգամն էր, որ գրկախառնութեամբ կ'ընդունէր զիս... : Մխիթարանքի ոչ մէկ խօսք իմ կողմէս եւ յուզումի ոչ մէկ նշան ի'ր կողմէ... Նստեցանք...: Շանգարը «Հրեշտակ»ը բերաւ դրաւ սեղանին ու անխօս հեռացաւ...: Նախ՝ լաւ մը ուսումնասիրեց քանդակը... մտածեց... ապա ճնշիչ լուրթիւնը խզելով ըսաւ.

-- Ինչո՞ւ հրեշտակ, եթէ ոչ թէ գրիչ կամ սուր մը...

-- Ինք կը հաւատար որ «Մալաք Ժպրայիլը» իր պահապան հրեշտակն է... այս մէկը իբրեւ Գաբրիէլ Հրեշտակապետ չէ յղացուած, սակայն կարելի է որեւէ անուն տալ անոր...: Գիտե՞ս... Երանի անձամբ... ճանչցած... չըլլայի...

Ըսի ու չկրցայ շարունակել... բնագոյաբար մեր աչքերը հանդիպեցան իրարու...: Ան ուղիղ աչքերուն նայեցաւ ու ըսաւ.

-- **Հերոսներու մահը չեն ողբար...** Ես հպարտ եմ ժպրանով... Ե'ս այդպէս դաստիարակած էի զինք... այս դժնդակ կացութեան մէջ ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ... Հայրենիքը նահատակներով կ'ապրի...(Յապաւուած):

* *Լեռնալիբանանի գիւղերէն մէկը, որ յայտնի է իր գեղատեսիլ դիրքով եւ առողջարար օդով:*

There are no comments yet.